գիր զոր առաք ի թագաւորէն, նա՛ ամենայն քաղաքիս արուեստաւորքն միաբան ի մի վայր գումարեալ մտաք առ վէզիրն Սիաւուշ փաշա և նա առաջի մեր անկեալ՝ տարաւ զմեզ առ թագաւորն, և թագաւորն ետ զգիրս զայս մեզ, և այժմ երթեալ մեր ժողովեցուք զամենայն քաղաքիս արուեստաւորքն և զխանութպանքն, և ի մի վայր գումարեալ գայցեմք առ քեզ, և դու առաջի մեր անկեալ տանիցես առ թագաւորն և մեք տվողին տացուք զգիրս։ Եւ զայս լըւեալ վէզիրին՝ այլ ոչ կարացեալ խօսել, քանզի խօսս այս երկեցուցանէր զնա, որպէս երբեմն արարին ընդ Մէլէկ Ահմէտ փաշային զայս։ Եւ ասէ վէզիրն ընդ նա. Գնացէ՛ք, լռեցէ՛ք, մի՛ տացէք զհարկ որպէս յառաջագոյն ոչ տայիք։

Եւ յետ բանիցս Հայք երթեալ Եչիս (12 Փեբր.) պահոցս թէ Շատ է այս հարկ ի վերայ մեր, զի յայսմ ամի Ծ քիւրէկճի յաւել էր։ Եւ նա ասէ՝ Տվէ՛ք ԲՃ. և սոքա ասեն՝ Շատ է այդ այլ ևս, և վէզիրն ասէ. ԲՃԾ տվէք. դարձեալ դուքն ի մի բերան թէ Ոչ կարեմք. և նա մեծաւ սաստիւ հատեալ զբանն թէ ԴՃ տվէք. և ի նոցանէ քանզի բարկացեալ էր՝ ետ հրաման թէ Գնացեալ ԴՃ քիւրէկճի տվէք։ Ամօթալից դառնային, եւ զԲՃ-ին Բ-ական Ռ ըստակ տվին՝ թէ մարդ գտէք. յորում աւուրքս յամենայն եկեղեցի կոտոր արարեալ բաժանմամբ, Ա. տվողն յամենայն ամի յայսմ ամի Գ երեսս և ամենայն ազգ այսպիսի ի մեծի վտանգի կայր։

Չէի լուս (13 Փեբր.) ի ժամ էաք։ Ուրբաթ երեկոյիս Տեառնընդառաջ եղև։

Շաբաթի օրս (14 Փեբր.) կիրակի և տօն տէրունի։

Եւ յօր Ուրբաթիս (13 Փեբր.) անցեալ վէզիրին ամենայն մեծամեծքն ի Ղալաթիա և թահրիր[1]) առ-

1) թահրիլ.